Մաշ: Կազմուած է թափանցիկ, անգոյն, աղիւսակաձեւ խորշերից: Սրանց մէջ կան անթիւ փոքրիկ ծակոտիկներ, որոնք շրջապատած են երկու կիսալուսնեակաձեւ խորշերից: Սոքա խռանիւր են (stoma):

Կ: Բազկացած է միջուկի խորշերից, որոնք դասաւորած են մաշկի տակ: Սրանք դառնում են առաձգական, չոր անկուտած, որ կոչվում է վեղիւ կամ շրջանաշ:

Անօնային նշանան խցիւ: Միջուկի մէջ համարեա միշտ դասաւորած են անօթային թելանման խրձերը, որոնք սկզբում բազկացած են երկրորդական կազմող անկուտածից:

Երկշաքլաւոր բոյսերի անօթային խուրձը բաժանվում է երկու մասի, որոնց մէջ զետեղուած է կամբին: Անօթային խուրձի մի մասը, որ դարձած է դէպի կեղեւը, կոչվում է վեղապային, իսկ միւս մասը որ դարձած է դէպի ցօղունի կամ արմատի կենդ-

րոնը — վայդային: Կեղեւային մասի արտաքին կողմը բազկացած է հաստապատ խորշերից, որոնք շատ ճկուն են եւ առաձգական եւ կոչվում են ի միասին ներկեղեւանք: Սրան յաջորդում է միջուկը, իսկ յետոյ նրբապատ երկայնաձեւ խորշերը եւ երկայն ճաղաքիւ խողովակները: Սրանցից յետոյ սկըսվում է երկրորդական կազմող անկուտածը: Հակառակ կողմը գտնվում է փայտային մասը, որ բազկացած է հաստապատ շատ անգամ փայտանիւթ խորշերից, որոնց մէջ ցրուած են զանազան անօթներ:

Միաշաքլաւոր բոյսերի ամբողջ անօթային խուրձը պատած է հաստապատ խորշերով, որպէս պատեանուով: Բայց ամենաէական զանազանութիւնը երկշաքլաւորներից այն է, որ երկրորդական կազմող անկուտածը շատ շուտով դառնում է մնայուն անկուտած, այնպէս որ անօթային խուրձը այլ եւս չէ կարողանում ընդլայնանալ:

ՅՈՒԽՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ:

Երկշաքլաւոր բոյսերի հոգունք: Յօղունի կենդրոնի մէջ գտնվում է մի գանաձեւ փափուկ

մարմին, որ կոչվում է ծառծ. նորա վերայ հագցրած է մի գլան անօթային—թելանման խրձերի, որ բաժանուած է երկու մասի (կայտ եւ ընդէպէան+) կազմող անկուածի գլանով: Այս բոլորը պատած է ի վեց գլանով: Միամեայ երկաքըլաւոր բոյսի ցօղունի առիշեղ կարուածքը ցոյց է տալիս, որ նորա վերայ կայ անօթային խրձերի շըրջան նեղ ծծանճան շառաւիղներով: շըրջանի մէջ—ծուծն է, արտաքուստ— սկզբնական կեղեւը:

Իւրաքանչիւր տարի երկրորդական կազմող անկուածի շըրջանը կեղեւի կողմը կազմումէ նոր կեղեւային շըրջան եւ ծուծի կողմը— նորագոյն փայտային շըրջան: Փայտի շերթերը զանազանվում են մէկը միւսից, որովհետեւ այն անկուածը որ տարուայ վերջը կազմումէ, աւելի խիտ է եւ աւելի սակաւ անօթներ է պարունակում իրա մէջ, քան թէ այն անկուածը, որ կազմումէ տարուայ սկզբում:

Միաշատլառ բայտ: Անօթային խրձերը շըրջան չեն կազմում, այլ ցրուած են միջուկի մէջ: Ծուծ եւ ծուծի շառաւիղներ,

նոյնպէս տարեկան շերթեր չկան: Անօթային խրձերը միայն դէպի վերեւ են աճում:

ԲՈՅՍԵՐԻ ՍՆՆԴԱՌՈՒԹԻՒՆԸ:

Իւրաքանչիւր բոյսի գլխաւոր զանգուածը բաղադրուածէ ածխածնից, ջրածնից, նուածնից, բուրկածնից եւ ծծուծնից, որովհետեւ այս տարրերից իսկ կազմուածէ պրօտօպլասման: Բացի սորանից իւրաքանչիւր բոյսի մէջ պարունակուած են՝ երկան, կրածնի, կալի, մագնի, լուսանի, նապարի, և +լը:

Ստորին բոյսերը սննդարար նիւթեր ընդունում են բոլոր մակերեւոյթով: վերին բոյսերը—այս նպատակի համար գլխաւորապէս գործ են գնում աշխատը, այն է սորա ամենամատաղ մասերը, որոնք ունին բարակ արմատային մազմզուկներ: Սննդարար նիւթերը մտնում են սրանց փակ պատերի միջով ծառալցանք: Տերեւները նոյնպէս ընդունում են սննդարար նիւթեր գազերի ձեւով:

Ածխածն ստանում է բոյսը գլխաւորապէս օդի ածխաթթուից: Ածխաթթուն

սպառում են տերեւները, ուր արեւի աղդեցութեան տակ նա լուծվում է բաղադրեալ տարրերի՝ ածխածինը մնում է բոյսի մէջ, իսկ թթուածինը արտահանվում է:

Զրածին ու թիւ-տժինը մտնում են բոյսի մէջ ջրի ձեւով. բորբակածինը—գետնից ամենից յաճախ աւշակի ձեւով. ծծո-ճինը—ծրծմբատներից:

Սննդարար նիւթերը, որ մտնում են բոյսի մէջ, պէտք է նոր աւելի բարդ բաղադրութիւններ կազմեն, պէտք է դառնան նման այն հորժարանա-ո՞ր բաղադրութիւնների, որ կան արդէն բոյսի մէջ (իւրացումն): Այս գործողութիւնը կատարվում է գլխաւորապէս տերեւների մէջ լոյսի եւ տաքութեան աղդեցութեան ներքոյ:

Արմատներից ընդունուած նիւթերը հասնում են տերեւներին հեղանիւթի վերաբերութեանման խրձերի փայտի մասերը, իսկ այնտեղ, ուր որ վերջանում են անօթային խըրձերը՝ խորշային անկուածը անց է կացնում հեղանիւթ ամենավերջին խորշերը: Հեղանիւթ բարձրացնող պատճառներն են՝ 1) արձակի ոյժը՝ սրա միջնորդութեամբ ծծած հեղա-

նիւթը անցնում է մերձակայ խորշերը եւ բարձրանում է միշտ դէպի վերեւ. արմատի ոյժը կարող է բարձրացնել հեղանիւթը 33 ոտն. բարձր եւ այլն: 2) Մաղական անօննէ-րի գործականութիւնը եւ 3) բարձրացնութիւնն որի պատճառով փոխվում է խորշերի մէջ պարունակուած օդային փամփուշտների մեծութիւնը:

Իւրացման երեւոյթը գլխաւորապէս առաջ է գալիս հետեւեալ գործողութիւններից, ա) ջրի գործականալուց, բ) ածխաթթուկ լուծուելուց, պահելով ածխածինը, գ) քորոգիլի կազմուելուց, դ) սպիտակուցի, օսլայի, շաքարի եւ այլ նիւթերի կազմուելուց:

Իւրացած նիւթերը անցնում են կամ ուղիղ այն տեղերը, ուր նրանց մէջ հարկաւորութիւն կայ, կամ առաջ այն տեղերը, ուր պէտք է պահչուին դրանք որպէս նիւթերի պաշար: Բաղմամեայ բոյսերի ամբարանոցներ են՝ բները, արմատները, սոխերը եւ թաղտերը. միամեայ բոյսերի մէջ պաշարի մեծ մասը պահվում է պտուղների մէջ: Իւրացած նիւթերը յետ են դառնում իջանող հոսանքով որի ճանապարհն է գլխաւորապէս ընդէլու-անուլ: Անօթային խըր-

Ճերի երկայնաձեւ նրբապատ խորշերը անց
են կացնում համարեա բացառապէս սպի-
տակուցի բաղադրութիւնները. կեզեւի մի-
ջուկը եւ ծուծը բորոկածին չպարունակող
բաղադրութիւնները: Կաթնային անօթների
մէջ պարունակուած են զանազան պաշարի
նիւթեր:

ԲՈՅՍԵՐԻ ԲԱԶՄԱՆԱԼԲ:

Սի տեսակ խորշեր կամ խորշերի խումբ
ունին ընդունակութիւն անմիջապէս արտա-
դրել նոր բոյսեր. միւս խորշերին այս ընդ-
ունակութիւնը աալիս են ուրիշ խորշերն,
որոնք բոլորովին տարբեր են նրանցից:
Առաջին տեսակները կոչվում են սաղ-
նային խորշեր, երկրորդները—յուսա խորշ: Սաղմնային խորշերով բազմանալու եղա-
նակը մեծ մասամբ տարածուած է ստորին
բոյսերի մէջ, որ լինում է սաղովով կամ
հասարակ պրոտերով վերին բոյսերի մէջ:
Վերջին եղանակը գործ են գնում՝ գործնա-
կան կեանքի մէջ եւ բոյսեր բազմացնում
են՝ նաղաւով, սակաւով, շաւառեցնով առէ-
րեւէ հասաւով:

Վերին բոյսերը բազմանում են սերմերից,
որոնք զարգանում են սերմնապտուկների
մէջ (ձուախորշեր) միայն այն ժամանակ,
երբ սրանք բեղմնաւորվում են չորս խոր-
շերից: Երբ առէջները հասնում են եւ
փոշու պարկերը բացվում, փոշհատիկները
քամու կամ միջատների օգնութեամբ ընկ-
նում են վարսանդի սպիի վերայ եւ կպչում
սորան: Հեղանիւթի գործողութիւնից, որ
արտահոսում է սպիից, փոշհատիկները ար-
ձակում են իրանցից մի կամ մի քանի փո-
շու խողովակներ, որոնք ներս աճելով սըռ-
նակի անկուածի միջով, մտնում են բողբո-
ջի խոռոչը եւ հպվում սերմնապտուկներին:
Սերմնապտուկների սաղմնապարչիում բեղմնա-
ւորութիւնից առաջ, կազմվում են երկու
խորշեր առանց թաղանթի—սաղմնափառչուց-
նչ: Բացի սորանից սաղմնապարկը պարու-
նակում է իրա մէջ էլի մի քանի խորշեր
իւր խարսխի մօտ, որոնց նշանակութիւնը
յայտնի չէ: Փոշու խողովակը բեղմնաւո-
րում է սաղմնափամկուշտներ, որոնցից մէ-
կից զարգանում է սաղմ, իսկ միւսը ոչնչա-
նում է: Սաղմը սնունդ է առնում սաղմնա-
պարկի անկուածից (սաղմուկուց): Եթէ այդ-

ամբողջ անկուածը սպառվում է, սերմը ա-
ռանց սպիտակուցի է լինում. հակառակ
դէպքում նա ունենում է սպիտակուց:

Սէր.է ծլունք: Սերմը բաղկացած է մաշկից
սաղմից եւ շաքիլներից. միաշաքիլները
ունենում են մի շաքիլ, երկշաքիլները—
երկու, ասեղնատերեւներով բոյսերը—մի քա-
նիսը: Բացի սորանից շատ սերմերի մէջ
պարունակած է սպիտակուց: Սպիտակուցը,
ինչպէս եւ շաքիլները, նշանակուած են
նորածիլ բոյսի կերակրելու համար: Մի քանի
սերմեր ծլում են անմիջապէս պտուղից
թափուելուց յետոյ, ուրիշները մնում են
մի քանի ժամանակ հանգստութեան մէջ:
Ուռենու սերմերը կորցնում են ծլելու ըն-
դունակութիւնը 12 օրից յետոյ, ընդեղէն-
ները ծլում են կրկին 43 տարուց յետոյ:

Ծլման հարկաւոր պայմաններն են՝ տաքու-
թիւն, խոնաւութիւն, լոյս եւ օդ: Սաղ-
մը կերակրում է այն նիւթերով, որոնք
պահուած են սպիտակուցի եւ շաքիլների մէջ
եւ աճում է՝ արմատիկը խորասուզվում
է հողի մէջ, իսկ պտուկիկը ուղղվում է
վերև եւ դուրս է գալիս հողից: Նաքիլները
կամ մնում են հողի տակ կամ դուրս են

գալիս հողից, կանաչում են եւ սկզբում
տերեւների գեր են կատարում:

ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ:

Երկրագունդի վերայ այժմ ծլող յայտ-
նի բոյսերի թիւը համառ է մինչեւ 100000:
Բոյսերի այդ մեծ թիւը քննելու եւ նրանց
համեմատելու համար, նրանցից կազմում
են խմբեր—համակարգութիւն: Կան արհեստա-
կոն եւ բնակոն համակարգութիւններ:

Արհեստակոն համակարգութիւնը ընդունում
է իբրեւ հիմն մի կամաւոր ընտրած յատ-
կանիշ, որ դիւրին է նկատել բոլոր բոյ-
սերի վերայ: Բնակոն համակարգութիւնը ուշա-
գութիւն է դարձնում բոյսերի զար-
գացման վերայ, սկսած նրանց ամենատոր
կամ ամենապարզ աստիճանից մինչեւ ամե-
նաբարձր կամ բաղադրեալ աստիճանը: Բնա-
կան համակարգութիւնը իբրեւ հիմն ոչ թէ
ունի մի որ եւ է յատկանիշ՝ այլ բոյսի բոլոր
էական, ներքին եւ արտաքին գործա-
րանները:

Արհեստական համակարգութիւնից ամե-
նալաւը—լիննէյի սեռական համակարգու-

թիւնն է, որի մէջ բոյսեր բաժանելու համար ընդունում է ծաղկի էական գործարանները՝ առէլունէրը եւ վարսանդնէրը:

Լինէի ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ:

Լինէյը բոլոր բուսական թագաւորութիւնը բաժանեց առէլքների զարգացման հիման վերայ 24 դասի, իսկ սրանց վարսանդի յատկանիշների հիման վերայ կարգերի: Կարգերը բաժանվում են ցեղի, ցեղերը—տեսակների:

ԴԱՍԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ:

I. Որոշ բեղմնաւորիչ գործարաններով (առէլքներով եւ վարսանդներով), Յայտնաբանութիւն—Phanerogamia

1. Երկսեռ ծաղկները (առէլքներ եւ վարսանդներ) մի եւ նոյն ծաղկի մէջ են:

Ա. Առէլքները չեն միանում վարսանդի հետ:

ա. Առէլքները միմեանց չետ չեն միանում (աղատ առէլքներ):

- | | |
|--------------------|-------------------------------|
| 1 առէլք . . I | Միարամբի. Monandria |
| 2 առէլք . . II | Երկարամբի. Diandria |
| 3 առէլք . . III | Եռարամբի. Triandria |
| 4 առէլք . . IV | Քառարամբի. Tetrandria |
| 5 առէլք . . V | Հնգարամբի. Pentandria |
| 6 առէլք . . VI | Վեցարամբի. Hexandria |
| 7 առէլք . . VII | Եօթնարամբի. Hepandria |
| 8 առէլք . . VIII | Ռոթարամբի. Octandria |
| 9 առէլք . . IX | Իննարամբի. Enneandria |
| 10 առէլք . . X | Տասնարամբի. Decandria |
| 12-18 առէլք . . XI | Երկուտասանարամբի. Dodecandria |

- | | |
|---|-------------------------|
| 20 և աւելի առէլք, կպած կոկոնից . . XII | Քսանարամբի. Isocandria |
| 20 և աւելի առէլք, կպած ընդունարանից XIII | Բազմարամբի. Polyandria |
| 2 երկայն և 2 կարճ առէլքներ . . XIV | Երկակարող. Didynamia |
| 4 երկայն և 2 կարճ առէլքներ . . XV | Քառակարող. Tetrodynamia |

- Բ. Առէքները միանում են միմեանց հետ։
- | | |
|----------------------------------|--|
| Հարդաբներ կողանոթներ աղաստ | 1 Խուրձ . . XVI Մեսեղբայրութիւն. |
| | 2 Խուրձ . . XVII Երկեղբայրութիւն. |
| | 3 Կամ մի քանի խուրձ XVIII Բազմեղբայրութիւն. Polyadelpbia |
- Փոշանօթները միանալով խողովակ են կաղմում . . XIX Համազգական. Syngenesia
- Բ. Առէքները միանում են վարսանդի հետ . . XX Կնարական. Gynandria
2. Միասեռ ծաղիկներով. այսինքն առէքներն և վարսանդները լինում են զանազան ծաղիկների մէջ. Առիշւոր և վարսանդաւոր ծաղիկները լինում են դէ-նոյն բոյսի վերայ XXI Միատնի Monoecia
- | | |
|-----------------------------|---|
| Առիշաւոր և սանդաղաների սերի | 2 բաժանեալ բոյսերի վերայ . . XXII Երկատնի. Diocia |
| | 2 բաժանեալ բոյսերի վերայ, բայց խառն են առուիգական ծաղիկների հետ XXIII Բազմամուսինք. Polygamia |
- II Բեղմաւորիչ գործարանները չեն երևում, կամ նրանք բոլորովին չկան . . XXIV Գաղտնամուսինք. Cryptogamia

- ԲՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ. I. Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ. ՍԵՐՄՆԱՏՈՒ ԲՈՅՍԵՐ, Spermatophyta. ԴՐԱԳԵՆՈՎ
- Դ Ա Ս Ա Ն ԵՐԿՇԱԲԻԼՆԵՐ, Dicotyledones.
1. Խորակ. Բաղմաներ, Eleuteropetalae
 - Կարգ Ընդուրանածաղիկք, Thalamyflorae.
 1. Ընտանիք. Եղածաղկիներ (Ranunculaceae). Խոտային բոյսեր են (բացի մամրիչից): Առէքներն անորոշ թւով են. վարսանդը—բազմապտղաման է:
 - Սամիչ. Clematis. Տերեւները հանդիպակաղիր են. կոկոնը 4—5 տերեւից է եւ ներկուած. պառւղը միասերմ անձեղքելի պրոցամաններից է. սրան են պատկանում մագրեցող կամ վաթաթւող բոյսերը: Տեսակներ՝ Մարտկունի—C. vitalba, մագլցող բոյս է. բուսանում է անտառներում:
 - Վարդակակաչ Anemone. Տերեւները հերթադիր են. ցօղունները ոչ մագլցող են եւ ոչ վաթաթւող. կոկոնը պսականման է, թերթեր չկան. պատառը տերեւաձեւ է: Տեսակներ՝ Վ.-եռաբլթակ. A. Hepatica. Վ.-գարնանային՝ A. vernalis.
 - Գնչնչուկ, Thalictrum. կոկոնը համարեա-

պսականման է 4—5 տերեւով։ Պսակ չկայ։
Պտղամանները ակրսաւոր են կողերով կամ
թեւաձեւ յաւելուածներով։ Տեսակ. դեղին
գնձմնձուկ։ *T. flavum,*

Նուծառչի—*Ranunculus.* Թերթերն իրանց
խարսխի մօտ ունին մի փոս մնանով։ պը-
տուզը—սերմիկ է։ Կոկոնի տերեւները 5 են,
թերթերը—5։ Ե. ջրային *R. aquatilis,* Ե.
կծուահամ. *B. acris* եւ այլք։

Մէւինայ. *Aconitum.* Պտուզը պարուտակ
է։ Կոկոնի տերեւները 5 հատ են եւ ներ-
կուած։ Կոկոնի վերին տերեւը սաղաւարտա-
ձեւ է։ Թերթերը 3—2 են. Երկու վերին
թերթերը սաղաւարտի տակն են պահուած։
Մեռինաթափ, *A. Anthora.*

2. Ընտ. Ծաշէնինէր—*Berberideae.*

Փայտանիւթ բոյսեր են։ Ճաղիկները միայ-
նակ են կամ նստած ողկոյզաձեւ։ Կոկոնի
տերեւները 3—9 նստած են 1 կամ 2 կարգ։
Թերթերը հաւասար են կոկոնի տերեւներին,
նոյնպէս եւ առէքները, որոնք նստած են
հերթով թերթերի հետ։ Պտուզը—հատա-
պտուզ է։

Կոժախուր—*Berberis.* Ողկոյզները կախունի
են. Հատապտուզները բաց կարմիր են. Մրհար-

ները եռամասնեալ են։ Տերեւները հակառակ
ձուաձեւ են թարթափաւոր եւ սղոցաբերան։
Կոծախուր, *B. vulgaris.*

3. Ընտ. Կոկոնինէր—*Nymphaeaceae.*

Լողացող բոյսեր են։ Թերթերը, առէքներն
եւ պտղամաններն անթիւ են։

Կոկոնի—*Nymphaea.* Կոկոնը 4 տերեւից է.
Սպիտակ կոկոռ կամ չարսնամատ *N. alba-*
ծաղիկները սպիտակ են։

Նունունչար, *Nuphar.* Կոկոնը 5 տերեւից է.
N. lutea. Ճաղիկները դեղին են։

4. Ընտ. Մշկոնինէր—*Papaveraceae.*

Խոտային բոյսեր են սպիտակ, նարնջագոյն
կամ դեղին կաթնային հիւթով։ Ծաղիկները
կանոնաւոր են. պսակը 4 թերթից է. ա-
ռէքներն անորոշ թւով են. Վարսանդը
միապտղաման է։ Աղտ կամ ծինը կողմնակի է։

Մշկոնի—*Papaver.* Սպին 4—20 ճառագայ-
թաձեւ է, սերմնարանը 4—20 թերթ միջնոր-
մներով է։ Կարսիր պուր. *P. Rhoeas.* Մակ-
չարսուն (կու ժկոտրուկ) *R. Argemone,* Խա-
խա. *P. Somniferum.*

Յիշեռնուեղ—Chelidonium. Սպին 2 բլթակ
է. սերմնարանը պատիճաւոր է եւ երկ-
փեղկ. Ծ. Դժ. C. majus.

5. Բնտ. Խաղաղժաղկիւ—Cruciferae.

Խոտային բոյսեր են. կոկոնը 4 տերեւից
է. պսակը 4 թերթից. առէջքները—քառակա-
րօղ են (4 երկայն եւ 2 կարձ):

Նահարակ (շարօ), Cheiranthus. Պատիճը
երկայն է գծաձեւ եւ տափակ. սպին խորը
բաժանուած է երկու մասի, որոնք հեռացած
են միմեանցից. Նահարակ մ-ժաղժաղկի. Ch. cheiri.

Կոռիճ—Nasturtium. Պատիճը գծաձեւ է
կամ ձուաձեւ կորնթարդ կամ համարեա
տափակ փեղկերով. ծաղիկները սպիտակ են:
Համարակ կոռիճ. N. officinale.

Կաղամբ—Brassica. Պատիճը գծաձեւ է
կամ երկայնաձեւ. փեղկերը կորնթարդ են
եւ իւրաքանչիւրը նոցանից մէջքի վերայ
ունի մի ուղիղ նեարդ. սերմերը գնդաձեւ
են եւ իւրաքանչիւր պահարանի մէջ նստած
են երկու կարգով: Կաղամբ B. oleracea.

Նազամ. B. Rapa. Շնապար B. Napus.

Կծուիճ—(փոթոթուկ) Cochlearia. Պատի-
ճը կլոր է կամ ձուաձեւ երկայն. փեղկերը

շատ ուռած են. սերմերը 2—6 են երկու կար-
գով. թերթերը սպիտակ են եւ ամբողջ. Կծու-
իճ. C. armoracia.

Բաղկ, Raphanus. Պատիճը համարեա կո-
նաձեւ է հարթ եւ տէրողորմիայի ձեւով.
Համարակ բաղկ. R. sativus. Բ. վայրէ կամ կծուակ
R. Raphanistrum.

6. Բնտ. Մանուշակնէյ—Violarieae.

Միամեայ կամ բազմամեայ խոտեր են
ստորերկրեայ ցողունով կամ տաքոիկով. ան-
կանոն ծաղիկները նստած են միայնակ. կո-
կոնը 5 տերեւից է, պսակը 5 թերթից. առէջ-
քներն էլ 5 հատ. պտուղը եռափեղկ բազմա-
սերմ սերմնարան է:

Մանուշակ. Viola. կոկոնի տերեւները կաղ-
մումեն ստորին կողմից թիթեղաձեւ ծիղ.
ստորին թերթը դրսեւից ունի մեղրանոց.
առէջքները կարձ են. ունին լայնացած շաղա-
մաթներ: Մ. հոգտա-էա. V. odorata. Զանազան
V. tricolor.

7 Բնտ. Մէռանժաղկնէյ—Hypericineae.

Թփեր են կամ խոտեր: Տերեւները հան-
դիպակագիր են. ծաղիկները կանոնաւոր.

առէջքները անթիւ են եւ կազմում են
բազմեղբայրութիւն (իրանց շաղամաթներով
միանում են եւ կազմում Յ խուրձ:)
Մէտանածաղիկի — *Hypericum*. Կոկոնը 5 տե-
րեւից է. պասակը 5 թերթից. սունակները
3 հատ են. սերմնարանը Յ պահարանով է:
Ծաղիկները ոսկեգոյն են. Մէտանածաղիկի — *H. perforatum*.

8. Ընտ. Մալվներ — *Malvaceae*.

Խոտային բոյսեր են: Ծաղիկները կանոնա-
ւոր են: Առէջքները անորոշ են եւ կազմում
են մենեղբայրութիւն (շաղամաթներով միա-
ցած են մի խուրձ:)

Մալվ — *Malva*. Կոկոնը կրկնակի է, արտա-
քինը, որ եռատերեւ է խարսխի մօտ միա-
ցած է ներքինի հետ, որ հնգամասնեալ է.
թերթերը 5-են. պտղամաներն բազմաթիւ
են, երիկամնածեւ եւ միասերմ եւ միանում են
իմիասին կազմելով կլոր տափակ շրջանածեւ
պտուղ. սունակները խարսխի մօտ միանում
են: Փէնտր. — *M. silvestris*, Ճնճղաբէլ (կու-
տասուկ) *M. rotundifolia*.

Բաբէնի. *Gossypium*. Պտուղը 3—5 փեղկ
սերմնարան է: Սերմերը անթիւ են եւ շրջա-

պատած երկար մազերով: Խոտային բամբակ: G. herbaceum; Բամբակի մշակութիւնը տա-
րածուած է Երեւանայ նահանգում:

9. Ընտ. Լոբչէնին: — *Tiliaceae*.

Ծառեր են: Տերեւները հերթադիր են.
առէջքները անորոշ են:

Լոբչէնի — *Tilia*. Կոկոնը 5 տերեւից է եւ
թափող. պասակը 5 թերթից է. պտղա-
մանները 5 են, սունակը մի է: Բողբոջը 5
պահարանով է եւ պահարանի մէջ կայ 2 ձու:
Պտուղը մի պահարանով է եւ ունի 1—2
նշանման սերմեր: Լոբչէնի լայնապէն: — *P. grandifolia*. Լ. փորբարբէն, *T. parvifolia*.

Կալիֆ 2. Կոկոնածաղիկի. — *Calyciflorae*:

10. Ընտ. Լնդէղնեներ — *Leguminosae*.

Թփեր են կամ խոտեր: Ծաղիկները թի-
թեւնածեւ են: Առէջքները 10 հատ են,
որոնցից բոլորեքեանք կամ 9 մի խուրձ ճն
կազմում: Պտուղը ունդ է:

Համբարչէ — *Cytisus*. Ծառեր եւ թփեր են:
Առէջքները միացած են մի խուրձ, սունակը
բարակ է եւ հետ զհետէ ծռվում է վերե-

Հում. Նաւակը բթածայրէ։ Հասահրդէ Երիշաղի։ C. biflorus.

Առասույս—Trifolium. Պսակը չորանալով, մնումէ եւ պատումէ ձուածեւ 1—4 սերմերով ունդը. առէլքները երկեղբայրութիւն են կաղմում եւ շատ թէ քիչ միանում են թերթերի հետ։ Ա. վայրէ. T. pratense. Ա. անդասառնէ. T. arvense.

Ոլոռն—Pisum. Կոկոնը հնգամասնատեալ է. շաղամաթները հերունաձեւ են. սոճակը ծայրում ծածկուած է մազերով։ Ունդը երկայնաձեւ է տափակ, մի պահարանով եւ բազմասերմ։ Տերեւները զուգափետուր են ծիլերով։

Հասարամէ ոլոռն. P. sativum. Ա. անդասառնէ P. arvense.

Լոբիա. Phaseolus. Կոկոնը երկշուրթ է է. սոճակը, առէլքները եւ նաւակը պըտուտկաձեւ ոլորուած են։ Տերեւները անզուգափետուր են եւ առանց ծիլերի։ Լոբիա հասարամէ. Ph. vulgaris.

11 Ընտ. Նշնիւր—Amygdaleae.

Ծառեր են եւ թփեր։ Ծաղիկները կանոնաւոր են։ Առէլքները 20 են եւ աւելի.

Վարսանիդը բաղկացած է մի պտղամանից 2 ձուիկով։ Պտուղը միրգ է։

Դէշինի—Persica. Միրգը հիւթամնալից է. կորիզը ունի խոր ծուռ ու մուռ ակոսներ եւ փոսեր։ Դէշինի հասարամէ. P. vulgaris.

Աւլունի, Prunus. Միրգը հիւթամնալից է. կորիզը առանց փոսերի է։ Մէրսնի—P. Armeniaca. Մամիկ. P. spinosa. Դամն. P. domestica. Շլր. P. insiticia. Բալ P. avium. Կըսար, P. Cerasus.

Նշնիւր—Amygdalus. Միրգը չոր է. միջնամտուղը վայտանիւթ է եւ ծակտկած։ Նշնիւր հասարամէ—A. communis.

12 Ընտ. Վարդեր Rosaceae.

Թփեր են եւ խոսեր։ Ծաղիկները կանոնաւոր են. առէլքները անորոշ թւով։ Վարսանդը բաղկացած է շատ պտղամաններից։ Պտուղը չոր է, միասերմ եւ անձեղքելի։

Ելուկ—Fragaria. Կոկոնը ունի եւ սոսորակոկոն. պտուղներն անթիւ են, նշաճեւ. Նստած են շատ մեծացած մսալից ընդունարանի վերաց, որ կաղմումէ կեղծ հատակուղ։ Սոճակները կողմնալի են։

Ելակ. F. vesca. Արևի. Ելակ. F. elatior.
Մուռնի. — Rubus. Կոկոնը սուանց ստորա-
կոկոնի է: Բազմաթիւ պտղամանները փո-
խակերպում են հիւթալից մրգեր, որոնք
նստած են բարձրացած սպնդանման ըն-
դունարանի վերայ: Առնակները գագաթային
են եւ թափւող: Մոռէ. R. idaeus. Մոշ. R.
fruticosus:

Վարդնի. Rosa. Բազմաթիւ պտղաման-
ները որոնք փոխակերպվում են միասերմ
նշիկներ, նստած են սկիչաձեւ կոկոնի խօ-
զովակի խոռոչում: որ հասունանալով գառ-
նումէ հիւթալից եւ մնալից: Մասուց. — R.
canina. Վարդ ճայեւտն. R. centifolia.

13 Բնու. Խնչուներ — Pomaceae.

Ծառեր են եւ թփեր: Ընդունարանը միա-
նումէ բողբոջի հետ: Բազմաթիւ առէջք-
ները նստած են ընդունարանի շուրջը ծայր-
ում: Պտղամանները 2—5 են: Պտուղը ոսկ-
րանիւթ կամ կաշուէ միջնապառւղով է:

Սղն. — Crataegus: Պտուղը հատապտղաձեւ
է, 1—5 կորիզներով: Սղն. — C. oxacantha.

Զղնունի. — Mespilus. Պտուղը մնալից է հա-

մարեալ գնդաձեւ: 5 կորիզներով: Զղնունի. — M.
germanica.

Խնչունի. — Pyrus. Պտուղը խսկական խնձոր
է, կաշուէ միջնապառւղով: Խնչունի. — P. ma-
lus: Տայչունի. P. communis.

Սցրչունի. — Cydonia. Պտուղը 5 պահաժառա-
նով է եւ ունի 1—10 կորիզներ: Խերա-
պատեանը կրծկային է, միջնապատեանը մը-
սալից է եւ պինդ: Սցրչունի. — C. vulgaris.

14 Բնու. Հալուածաղիներ — Um-
belliferae.

Խոտային բոյսեր են: Ծաղկափթութիւնը
հովանի է: Առէջքները 5-են: 2 սպի. պը-
տուղը երկսերմիկ է: Կողմանը մասնաբար
Զաման. — Carum. Պտուղը երկայնաձեւ է,

կողքերից սեղմուած: վրէն կայ 10 հատ
սկզբանական կողեր խողովակներով: Ընդհա-
նուր եւ մասնաւոր պատառներ չկան:
Զաման. — C. carvi.

Մուռինու. — Conium. Պտուղը կլոր ձուաձեւ
է, կողքերից շատ սեղմուած է: Կողերը ծու-
ռումնեռ են եւ քիչ զարգացած: Մ. բժառու.
C. maculatum.

Զ. Խումբ: ՄիԱԹԵՐԹԻՔ—Gaimopetalae.

15 Բնու. Բաղմաժաղկներ—Compositae.

Խոտային բայսեր են: Ծաղիկները կազմում են խոյակ: Առէքները 5-են եւ միացած են փոշանօթներով: Խոզբոջը մի պահարանով է եւ ստորադիր:

Հաղիտեղ—*Tussilago*. Պատատը քաղկացած է 2 կարգ սեղմուած: Թեփերից առուիգական ծաղիկները փողածեւ են եւ նստած են զամբիւղի մէջ տեղում: 5. ատամներով են եւ անպատուղ: զամբիւղի ափի ծաղիկները մի քանի կարգ նստած են, նրանք վարսանդաւոր են, նեղալեզուածեւ եւ պրտղասու: Հաղիտեղ—*T. farfara*. Տերեները զարդանում են ծաղիկներից յետոյ:

Արևածաղկի—*Helianthus*. Ափի ճառագայթածեւ ծաղիկները առանց առէքների եւ վարսանդների են: Կենդրոնական ծաղիկները փողածեւ են եւ արուվդական: պրտուղը սեղմուած է: Արևածաղկի: *H. annuus*.

Տէրփուկ—*Centaurea*. Ծաղիկները բոլորեքեանք փողածեւ են: ափի ծաղիկները միւսներից խոշոր են եւ լինում են առանց սեռական գործարանների: Պատատը կզմնու-

րաձեւէ, նրանուեները ծայրին ունին յաւելուածներ. պտուղը հակառակ ձուածեւ է, սեղմուած, առանց կողերի. Տէրփուկ—*C. Cyanus*.

Վարչուց—*Taraxacum*. Պատատը թեփածեւ է եւ խարսխի մօտ ունի մի քանի տերեփիկներ: Պտուղը փոքր ինչ սեղմուած է, ծայրին ունի փափուկ փշեր եւ վերջանում է մի երկայն ծիզով: որ ծայրին ունի մազուտ թրուշարան: Ընդհանուր ընդունարանը մերկ է: Վարչուց—*T. vulgare*.

16 Բնու. Զինենէի: Oleaceae.

Տառեր են կամ թփեր: Տերեները հանգիպակադիր են: Առէքները 2 են:

Հացինի: *Fraxinus*. Պտուղը—թեւուկ է: Հ. Ո-ղղաբեց: *F. exelsior*. փետրաւոր տերեներով է:

Սրինի—*Syringa*. Պտուղը 2 պահարանով եւ 2 փեղկեայ սերմնարան է: Ա. Հաստրակ: *S. vulgaris*.

Զինենէ Olea. Պտուղը միրգ է: Ա. Զինենէ—*O. europaea*. պտուղներից քամում են ձեթ:

17 Ընտ. Մարմար + Solanaceae.

Խոտեր են կամ թփեր: Առէջքները պըսակի թերթերի թւով են: Բողբոջը երկու պահարանով է եւ անորոշ թիւ ձուխկներով:
Մարմ. Solanum. Կոկոնը 5 մասնեալ է կամ ատամնաւորեալ: Պսակը անուածեւ է, 5 բլթակով եւ ծալոտեալ: Պտուղը — 2 պահարանով բաղմասերմ հատապտուլ է:
Գլազուրնոյ: S. tuberosum. Ենթալոյ: S. nigrum.

Բանդ. Hyoscyamus. Պտուղը 2 պահարանով տուփ է, որ բացվումէ առանձին խովիով: Բանդ. (բագ-բաղ) H. niger.

Թաճառու, Nicotina. Պսակը ձագառածեւ է. կոկոնը մնայուն: Սպին գնդածեւ է: Սերմնարանը ծայրին քառաբլթակ է: Թաճառու (ծխախոտ) N. tabacum.

18 Ընտ. Նընածաղիներ — Labiateae.

Խոտային բոյսեր են: Պսակը անկանոն է. մեծ մասամբ երկշորթ է, Առէջքները պըսակի բլթակներից փոքր են: Բողբոջը քառաբլթակ է: Սոճակը դուրս է դալիս բըլթակների մէջ տեղից: Պտուղը բաղկացացած է 4 չոր միասերմ նշիկներից:

Անանու-ի — Mentha — Պսակը ձագառի նրան է քառամասնեալ: Կոկոնը 5 ատամնով է: Առէջքները ցցուած են եւ ուղղաբերձ: Վայրի Անանու-ի — M. silvestris.

Եղաղակ — Salvia. Կոկոնը երկշորթ է. պսակն էլ երկշորթ է: Առէջքները 2 են. գիսակը ճիւղաւորած է, ուստի փոշու պարկերի մասերը միմեանցից չեւացած են: Բժշկական Եղաղակ: S. officinalis.

Եղնձանայք — Laium. Կոկոնը զանգակածեւ է: Պսակը երկշորթ: Առէջքները 4 են եւ բոլորեքեանք թագ են կացած վերին շրթունքի տակ: Ամէն մի առէջքի 2 փոշու պարկերը բացվում են մի ընդհանուր ճեղքով: Սպիտակ Եղնձանայք L. album.

III ԽՈՒՄԲ. ՄԻԱԾՍԾԿՔ Monochlamydeae.

Ընտ. 19 Հարեղիներ — Poligoneae.

Խոտային բոյսեր են: Տերեւները իրանց կանթերի խարսխի մօտ ունին կաշուէ յաւելուածներ: Բողբոջը մի պահարանով է եւ ունի մի ուղղագիր սերմնապտուկ:

Թըլչու-ի — Rumex. Երջածաղիկը 6 ամասնեալ է, առէջքները 6 հատ են. սպին փըն-

Հածեւ է. Արևնշուրի հասուրախի R. acetosela.
Ա-էլ-է. R. obtusifolia. Խոշշուրի (Գաբծիլ).
Rheum. Երջածաղիկը 6 կամ 9 ամասնեալ
է. ունի 3 հաստ սպիներ. Գաբչիլ Խալաչի —
Rh. tataricum.

Մարեալ—Polygonum. Երջածաղիկը 4
—5 ամասնեալ է. Ներկուած է ներքին կող-
մից. Առէլքները 8 հատ են. Զիակորեակ.
P. Fagopyrum.

Ընտ. 20. Եղինձն-ը—Urticeae.

Ածող խոտային բոյսեր են. Մաղիկները
միասեռական են. Բողբոջը մի պահարանով
է եւ ունի մի ուղղագիր սերմնապտուկ:

Եղինձ—Urtica. Մաղիկները միատնի են
կամ երկատնի: Առէչաւոր ծաղիկների շըր-
ջածաղիկը 4 ամասնեալ է. Վարսանդաւոր-
ներինը—2 ամասնեալ. առէլքները 4 են:
Ե. այժմու, U. urens. Ե. չիտանի. U. dioica.

Կանէ ։—Cannabis. Մաղիկները երկատնի են:
Առէչաւոր ծաղիկների շըրջածաղիկը 5 ամաս-
նեալ է. Վարսանդաւորներինը—1 տերեւ.
առէլքները 5 են. Կ. հասուրախի C. sativa.
Բերած է չնդկաստանից:

Փուլութոր (գայլխոտ) սարմըշըդ) Humulus.

Մաղիկները երկատնի են: Առէչաւոր ծա-
ղիկների շըրջածաղիկը 5 ամասնեալ է. Վար-
սանդաւորները նստած են թեփածեւ տե-
րեւների. ծոցերում որոնք խողակներ են
կաղմում: Ժ. Գայլխոր—H. Lupulus.

Ընտ. 21 Խողակն-ուներ—Cupuliferae.

Մառեր են եւ թփեր. Մաղիկները միասեռ
են: Բողբոջը ստորագիր է: Մարկական-
ները մեծանում են ստղի զարգանալովը եւ
կաղմում խողակնի: Պտուղը կաղին է կայ
կաղնապտուղ:

Կաղնի—Quercus. Վարսանդաւոր ծաղիկ-
ների պատճառը կաղմած է անթիւ թեփե-
րից: Առէչաւոր ծաղիկները նստած են ընդ-
միջող փնջիկի վերայ 6—10 առէլքներով:
Զանազան տեսակ կաղնիներ: Q. sessiflora,
Q. pedunculata, Q. robur, Q. suber. (Սպլն-
գային կաղնի):

Տիւլ Corylus. Պատճառը 3 տերեւիկներից
է: Առէչաւոր ծաղիկները նստած են ամուր
գլանաձեւ փնջիկի վերայ 4 առէլքներով:
Տ. Անդամանի C. Avellana.

Ընտ. 22. Ունիւր—Salicineae.

Մառեր են կամ թփեր. Մաղիկները միասեռ

են: Բողբոջը վերնադիր է մի պահարանով
եւ շատ սերմնապառուկներով: Սերմերը ու-
նին փունջ մազեր: ծառամ յդամաքարտա
և Ու-ի—*Salix*. Փնջիկների թեփերը ամբողջ
են. Ո. Ֆիւն-*S. fragilis*.

Կալամախի. *Populus*. Փնջիկների թեփերը
մասնաւել են: Կալամախի. *P. alba*. Կորախի.
P. tremula. Յուխի. *P. nigra*. Բարպի—*P.*
delatata.

Քառ Ա Միաշարիկներ—*Monocotyledones*

Կարգ I. Կողլուզեիկ, *Spadiciflorae*,
Ընտ. 23. Կաճաղներ—*Aroideae*.

Խոտային բոյսեր են: Մաղիկները կողը են
կաղմում: պտուղը հաստապտուղ է:
Ալճաղ. *Arum*. Կողը ծայրին մերկ է:
Կ. բծառու. *A. maculatum*.

Ընտ. 24. Ա. ԲՄԱԻՒՆԵՐ. *Palmae*.

Յօղունը ուղղաբերձ է առանց ճիւղերի.
տերեւները յօղունի գագաթին հաւաքուած
թագի ձեւով են նստած: Մաղիկները կողը
են կազմում: մանր են 6-ատերեւ եւ 6 բը-
թակ շրջածաղիկով: առէջքները 6 են, վար-

սանդը Յ պտղամանից է: Ա. Շա-է-նի. *Phoe-*
nix dactylifera. Ընկ-ը-լուբ-է-ր Ա. Ծ. *Cocos*
nucifera.

Կ ա ր գ 2. ԹԵՐԹԱԶԵՒԿ Պելաօիդէ.

Ընտ. 25. Ն-շան—*Liliaceae*.

Խոտային բոյսեր են: Շրջածաղիկի տերեւ-
ները թերթանման են: Առէջքները 6 հատ
են. բողբոջը վերնադիր է:

Ծա-բ-չ-ի—*Asparagus*. Տերեւները խրձով են:
մերկ ծաղիկները առ հասարակ երկատնի են:
Պտուղը հիւթալից է անձեղքելի՝ Հասարակ-
ու. *A. officinalis*.

Կալապ—*Tulipa*—Շրջածաղիկը զանգակա-
ձեւ է, թափւող. շրջածաղիկի տերեւները ա-
ռանց մեզրակիր փոսերի են. սպին համարեա-
նստագիր է եւ Յ բլթակ. պտուղը չոր սեր-
մնարան է Յ-անիստ: Յ-ապահարան անթիւ
տափարակ սերմերով: Կ. հարաւ-է-ու. *T. Gesne-*
tiana.

Ծա-շան. *Lilium*. Շրջածաղիկը խարսխի
մօտ զանգակաձեւ է. սորա տերեւները ծայ-
րին յետ են ծալուած եւ ոլորուած. ինա-
րախի մօտ ունին մամանուտ առիշեղ տկոսներ:
Առնակը երկայն է: Յ. աղյուսի, *L. candidum*,

Բնութ. 26. Խոլըշներ—Orchideae.

Խոտային բոյսեր են: Նրջածաղկեր անկանոն է պամականման: Յառէքներից, որոնք նստած են բողզովի վերայ, զարգացած է առհասարակ մէկը: Փոշին հաւաքած է ի միամին եւ կազմում փոշադէզ: Բողբովը ստորագիր է:

Խոլըշ—*Orchis*. Բողբովը ոլորուած է. Ծաղկի շրթնածեւ մասը դարձած է մեղրանոց. ցոռուկի ծիլը հեռացրել է միմեանցից փոշու պարկերը, որոնք երկայն են նրանց տակը գտնուող սունակից: Մածնիկը ծածկուած է երկու պահարանից փոշու պարկով: Խոլըշառար. *O. maculata*.

Կարգ 3. ՀԱՏԱՊԱՏԵՆԱՐՈՐՆԵՐ—Glumaceae.

Բնութ. 27. Երչէնէր—Cyperaceae.

Խոտային բոյսեր են: Տերեւի պատեանը ճեղքուած է: Ներքին հատապատեանը միանեարգ է:

Երչէն. *Scirpus*. Հասկերը թեփերով են, որոնք ուղղուած են ամենայն կողմ: ամէն մի ծաղկի մօտ նստած է մի հատ թեփ. շրջա-

ծաղիկը 6 քիստերից է: Հասարակ կէցնէ: *S. maritimus*.

Պրոռ. *Carex*. Ծաղիկները միատնիւեն: Բողբովը փակուած է մի տեսակ բշտաձեւ ծածկոցի մէջ: Պրոռ. հակնային. *C. arenaria*: եւ պյու: *H. juncoides*: Թանաձի վիրած

Բնութ. 28. Արքուն. Gramineae. III

Խոտային բոյսեր են: Տերեւի պատեանը ճեղքուած է առաջին կողմից: Ներքին հատապատեանը երկու նեարգով է:

Սէնդր. *Zea*. Ծաղիկները միատնի են: Պտուղները գասաւորած են կողրածեւ մսալից: Հասկաբնի վերայ. Եժէպատացութան—*Z. Mays*.

Յար. ան. *Triticum*. Հասկաբունը յաւելուածներով է, որոնց վերայ գտնվում են մի, 2 կամ բազմածաղիկ հասկուկներ. Հասկուկները դարձած են հասկաբնին կողքերով: Հատիկը ունի որոշ ակու: Հասարակ յոր. *T. vulgare*. Զարար. *T. speltha*.

Ա.ճար (աշարայ). *Secale*. Հասկաբնի յաւելուածների վերայ կայ մի հատ հասկուկ 2 զարգացած եւ մի միջին անզարգացած

Ճաղիկով. արտաքին ճաղիկների թեփերը
քիստերով են. Ա. հաստրակ. S. cereale.
Գորշ. Hordeum. Հասկաբնից յաւելուած-
ների վերայ կան երեք հաս հասկունելու
Հասկուների մէջ մեծ մասամբ մի հատ
ծաղիկ է լինում: Գ. հաստրակ. H. vulgare.

III ԴԱՍԱԿՈՆԱԿԻՐՆԵՐ. Coniferae.

Ընտ. 29. էղ-ին-ը—Abietineae.

Ծառեր են: Տերեւները միշտ ասղնաձեւ
են: Պտուղները հաւաքուած են կոնի մէջ,
որ բաղկացած է փայտանիւթ թեփերից:

Փէճ. (Ոարոյ) Pinus: Ասղնատերեւները
նստած են զոյգ զոյգ կամ խրձով. ձմե-
ռում են: Կոնի թեփերը ծայրին հաստ են:
Փէճ. P. silvestris.

Եղ-ին. Picea. Ասղնատերեւները մի մի
հատ են. Կոնի թեփերը բարակ են փայտա-
կաշուածեւ. Ե. հաստրակ. P. vulgaris.

Կոն-նի. Larix. Ասղները ձմեռը թափ-
փում են: Կոնի թեփերը բարակ են. Է-րո-
պական կ. L. europea.

Ընտ. 30 Նոճիւր Cupressineae

Ծառեր (Են կամ թփեր): Տերեւները կարճ
թեփերի ձեւով են, որոնք ծածկում են մի-
մեանց: Ի մի հաւաքուած պտուղները հաս-
տապուղների կամ փոքրաթիւ սերմերով
կոների պէս են:

Գիճ. Juniperus. Պտուղները կեղծ հա-
տապուղների պէս են: Հաստրակ. Գիճ. J.
communis.

Նոճ. Cupressus: Պտուղը կոնի պէս է
եւ բաղկացած է կոշտ, փայտանիւթ վահան-
ներից, որոնք խիտ մատեցրած են միմեանց:
Սըմուռալը Նոճ. C. Sempervirens.

Ընտ. 31. Իշխ-ը. Taxineae

Տերեւները համեմատելով այլ կոնակիր
բոյսերի հետ, աւելի լայն են. կեղծ պտուղ-
ները մասլից միրգերի պէս են:


Գ.՝ Տ. Taxus. T. baccata.

16

Digitized by srujanika@gmail.com Page - 30

ՍՊՈՐԱԳԵՆԵՏԻԿ (Sporophyta)

Այս հատուածի մասին աւելորդ ենք հա-
մարում այս համառօտ դասընթացի մէջ
խօսել:



Տ ամք ինչ զը տա՞ Առաջութեալ Ո թա՞
-անշախ Արդարացի ուղով և նպարակ ու
-պատվագան մէ նողածու ույլ զնուա սփրեն
-առունուան Ո թա՞ զուացուան Ո

organized through the work of

զիմանքը պա խրծունելու պահանջման
շրջակա ծրբը և այս վճառ ունե գրեթե
այս ուրի պահանջման պահանջման
առօսքը Պ. ՀԱՅԵԼ-ԵՒ

105

5860

2013

«Ազգային գրադարան»



NL0069860

